ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

« 09 » դեկտեմբերի 2025թ. № 258-Ա

## ՀՀ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂ ՅԱՂԴԱՆ 06-079-0012-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՉԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Ավագի Շիրմազանյանի (ծնված՝ 20.01.1948թ., անձնագիր՝ AL0342047, տրված 17.07.2023թ. 053-ի կողմից) լիազորված անձ Գիվի Մամեյի Քալաշյանի (անձնագիր AU0335050, տրված 29.06.2021թ. 053-ի կողմից) կողմից ներկայացված դիմումը, 23.06.1994թ. տրամադրված սեփականության վկայագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 13.03.1991թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ հողամասեր հատկացնելու մասին» թիվ 209 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, 10.06.2008թ. «իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և հաշվի առնելով, որ ՀՀ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.18218 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Վերականգնել Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 կադաստրային ծածկագրում գտնվող 0.18218 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Մարզ Լոռի համայնք Լոռի Բերդ գյուղ Յաղդան 06-079-0012-0026 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը 0.18218 հա

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Օրենքի ուժով անհատույց ճանաչել Միդա Ավագի Շիրմազանյանի /ծնված 20.01.1948թ/ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված 0.18218 հա հողամասի նկատմամբ
3. 0.18218 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 23.06.1994 թվականի սեփականության վկայագիրը կազմված է թերի, սեփականութան վկայագրում արտացոլված չեն բնակելի տան 1936 թվականի կիսանկուղը և հողամասում 1936 թվականին կառուցված անասնաշենքը, վկայագիրը չի համապատասխանում փաստացի 1936 թվականին կառուցված շինությունների տեսքին և մակերեսին, 06-079-0012-0026 ծածկագրի 0.18218 հա բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 31.9 քմ ներքին մակերեսով բնակելի տան կիսանկուղի, 51.3 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 42.1 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 2.0 քմ մակերեսով բնակելի տան բ/պ կամ ա/հ-ի և 21.1 քմ ներքին մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Միդա Ավագի Շիրմազանյանի սեփականության իրավունքը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ․․․․․ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2025թ. դեկտեմբերի 09

գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 10 » դեկտեմբերի 2025 թվականի N 259-Ա

### ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ, Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2023թ. թիվ 2/-14 դրական եզրակացությունը, ինչպես նաև հիմք ընդունելով՝ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի գլխավոր հատակագծի մշակման-նախագծման առաջադրանքը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 13.01.2023թ. թիվ 5-Լ և «Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը հաստատելու մասին» 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումները, «Լոռու մարզի Լոռի-8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը տարածքային հատակագծման մասով հաստատելու մասին» ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ. թիվ 259-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի Անդրանիկի 4 հասցեի բնակիչ՝ Սուրեն Լորիսի Ռուշանյանի դիմումը և 23.10.2009թ. թիվ 2501182 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝

**որոշում եմ.**

1. Սեյրան Լորիսի Ռուշանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-044-0207-0057 կադաստրային ծածկագրով 0.22 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխադրել՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Հողամասի կադաստրային արժեքի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը կազմում է՝ 445.610/ չորս հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր տաս/ ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի 900255114135 հաշվեհամարին:

…ույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝ վճարման անդորրագրի առկայության …պքում:

…. Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2025թ. դեկտեմբերի 10
գ.Լոռի Բերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 15 » դեկտեմբերի 2025թ. № 260-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԳՅՈՒՂԻ 06-038-0033-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՖԵԼԻՔՍ ՓԱՇԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. «Կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, Հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի կադաստրային քարտեզը, 26.08.2003թ. թիվ 1646438 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, 20.01.2015թ. թիվ 20012015-06-0015 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վկայականում հողամասի գծային չափերը համապատասխանում են կադաստրային քարտեզում առկա հողամասի սահմանային չափերին և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև հիմք ընդունելով Ֆելիքս Փաշիկի Գալստյանի լիազորված անձ՝ Էդուարդ Վաղինակի Պապյանի (անձնագիր՝ AT0410395, տրված՝ 09.03.2020թ., 053-ի կողմից) կողմից ներկայացված դիմումը՝

**ո ր ո շ ու մ  ե մ**

1. Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0033-0005 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Ֆելիքս Փաշիկի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանային չափերը և հողամասի մակերեսի չափը՝ 0.2589 հա, համաձայն՝ «ՏԻԳՐԱՆ ԲԱՇՈՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծի: Հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու արդյունքում առաջացած արժեքը կազմում է՝ 141.760 (մեկ հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որը անհրաժեշտ է վճարել Լոռի Բերդի համայնքապետարանի թիվ 900255114135 հաշվեհամարին:

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի 06-038-0033-0005 կադաստրային ածկագրի 0.2589 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Ֆելիքս Փաշիկի Գալստյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վճարման անդորրագրի առկայության դեպքում: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2025թ. դեկտեմբերի 15**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» դեկտեմբերի 2025թ. № 261-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

**1.** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի 06-044-0207-0057 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Ստեփանավան-Լոռի Բերդ խճուղի թիվ 19 հողամաս փոստային հասցեն:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

**2025թ. դեկտեմբերի 15**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» դեկտեմբերի 2025թ. № 262-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

**1.** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի 06-044-0207-0059 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Ստեփանավան-Լոռի Բերդ խճուղի թիվ 11 հողամաս փոստային հասցեն:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

**2025թ. դեկտեմբերի 15**
**գ. Լոռի Բերդ**